

Հոգեբեր մեր երկիրներում մեծ մասամբ կալուածների կառավարչներին են հարստացնում և ոչ թէ իրան կալուածատիրոջ:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ԲԱՅԱԶԷԹԻՅ

5 օգոստոսի

Ամեն մի շատ թէ քիչ ընթերցատէր և հայրանցեալով ու ապագայով հետաքրքրուող հայ մարդուն պարզապէս յայտնի է, որ հայը զանազան քաղաքական պատճառներով ստիպւած, կորցնելով յոյժը իր քաղաքական ազատութեան վրա, և անձնատուր լինելով վաճառականութեան որոնել է իր անձնական ապահովութիւնը դադարեցնելով մէջ և գաղթելով ուրիշ երկիր իր բնիկ աշխարհից և նոր հայրենիքում տեղական, քաղաքական և կրօնական ճնշման ներքոյ գտնւելով կարծես անգիտակցաբար կուլ է դնացել տիրող ազգութեան տարրի մէջ, այնպէս որ կամ բոլորովին հայութիւնը անհետացել է այդ երկիրներում, թողնելով պատմութեան համար մի քանի անբան յիշատակներ, կամ թէ մի անշնչան թիւ է մնացել գաղթականներից, և սրանք էլ բոլորովին խորթացած են հայրենիքից: Բայց դադարեցնելով իր հայրենիքից հայերի մի նշանաւոր մասն էլ բռնի կերպիւ, կամ հարկից ստիպւած ընդունելով մահմետականութիւնը *) և կրօնը շփոթելով ազգութեան հետ, ուսումից դուրի լինելու պատճառով դարձելով չըմանում ձուլվելով տիրող մահմետական ցեղի հետ բոլորովին մոռացել են իրանց հայ ազգութեան պատկանելը: Ահա այս երկու հանգամանքները եղել են պատճառ այն իրողութեան, որ ներկայումս հայերը իրանց բնիկ աշխարհում կազմում են փոքրամասնութիւն մահմետական և ոչ—հայ ազգութիւնների համե-

նախորդող անօրինակ անօրինակ, անօրինակ հայերի անելով, ծագումով հայ են:

և չնորձները ըրած են նոցա:

Անգղիացի օրագիրը սաստիկ կերպ կը զգայ հայոց հարստութեան: Երանք թէ ըսածը ստույգ լինէր և հայք արեւելից ամենէն հարուստ ժողովուրդը լինէին: Միթէ հայոց հարստանալու միջոցներն ինչպիսի ալ ապօրինաւոր լինին, կըրնան հաւատարիմ Անգղիոյ աֆիւն ծախելու միջոցներուն ի ջին: Այս, երբ Արմամ օնի հրազենները չունենայ ժողովուրդը մը, այն ատեն ուրիշ միջոցներու կը դիմէ, շատ անգամ ոչ թէ հարստանալու ալ ապրելու համար, վասն զի հարստանալ ինչպէս կարելի է կառավարութեան մը տակ որ տարիներու խնայութեամբ ժողովուրդը մէջ օրուան մէջ հրովարտելով մը միայն կրնայ յափշտակել: Հայք Արեւելք կարելի է թէ քանի մը ստակ ունենար թէ որ Եւրօպիոյ արեւմտեայց պարզամիտ ապուրիւնը չըլար որ տաճկի փոխառութեանց ստորագրելով վտահոլութիւն հազարեցին (Օսմանեան ռաջա-ն երուն որ սխալ և չափէն աւելի համարմունք ունեցան այդ ազգաց լրջամտութեան վրա, և այդ թուղթերը առին սնտուկին պահեցին, որ առանց Եւրօպայի ժողովուրդը օրինակին ձեռքերնին նաեւ չէին բռնել: Մինք հասանք և տեսանք ան օրերը որ հրաման մը միայն ոչ թէ հրովարտակ՝ բաւական էր բազմութիւն մարդկան զրկելու ոչ ի ստացուածոց միայն, այլ և ի կենաց: Եւ այսպիսի երկրի մէջ միջոցներ յանգանք կը համարուին հարստանալու, ան մարդիկներէն որ կուգրորդ գործաւորներ կը բանեցնեն Անգղիա և անգղիս նաւեր կը բեռնեն տանելու աստուածներ վաճառելու Հնդկաստան իրենց հպատակաց:

Եւ ասոնք ան կրօնական ազգն են որ քարոզիչներ կուղարկեն յԱրեւելք քարոզելու համար ընդդէմ յարգութեան խախտ և պատկերաց:

Բայց մեր միտքը այս գրութեամբ թրջամով անգղիացւոյ մը հետ վիճել չէ որ դառնանք զբուրեցնել իրեն թէ «տուրիւն և խաբէութիւն գիտութեան զէնքերն են» մեր միտքը հեռու է այդ արդարացումէն, և մեզ փափաքելի է որ նաեւ գիտութեան մէջ՝ անարգ ստուկներ և խաբէութենէ զուշանանք և հայ ազգին ընդ-

մատուցեմք: Հայերի փոքրամասնութիւնը միայն առիթ առնելով Անգլիան իր լրագրողների միջոցաւ իր շահաւէր նպատակներին հասնելու համար Բերլինի դեսպանաժողովում մեր մէջ տուեց հայ պատգամաւորներից ներկայացրած օրգանական կանոնադրութիւնը, ինքնավարութիւն պահանջող Հայաստանը աշխարհագրական—երեւակայական և ոչ իրական աշխարհ անուանելով, թէ և օտար և հայ լրագրութիւնը հիմնաւոր փաստերով հաստատեց, որ Տաճկահայաստանի այն գաւառներում, որոնց բնակչաց համար ինքնավարութիւն էր պահանջուում, հայերը թուով երկուպատիկ աւելի են մահմետական և այլ ոչ—հայ ազգութիւններից: Այժմ հասկանալի է, որ եթէ Անգլիան իր ներկայ վարմունքով զեռապատկողութիւն մերմէջ տուեց հայոց պահանջը առիթ առնելով հայոց փոքրամասնութիւնը, ուրեմն այսուհետեւ պէտք է նպաստէ հայոց գաղթականութեանը այն պատճառաւ, որ առիթական Տաճկաստանում միայն հայերն ունեն ձգտում, թողալով մահմետական անտանգի լուծն և լինել կամ մի ազատ ռուսաց հովանաւորութեան ներքոյ, հետեւաբար և Ռուսաստանի շահերին ծառայող ազգ կամ եթէ այդ անխորհի լինի, բոլորովին միանալ Ռուսաստանին ուստի Տաճկաստանից հայը բնաջինջ առնելով Անգլիան Ռուսաստանի աղբեղութիւնը զգալի կերպիւ կը թուլացնի փոքր-Ասիայում, մահաւանդ եթէ ի նկատի առնենք, որ անգլիական քաղաքականութիւնը պատրաստուում է ժառանգ լինել փոքր-Ասիային, այն ժամանակ համոզւած պիտի լինենք, որ նա, միայն հայերից դիմադրութիւն սպասելով Ռուսաստանին միանալու դիմամբ, պէտք է աշխատէ հայերի ցրվելուն նպատակով լինել: Ուրեմն ինչ պէտք է արած գաղթականութեան առաջն առնելու համար: Մեզ հայերիս փոքր չէ, թէ ինչ նպատակով Անգլիան վերցրել է իր վրա առիթական Տաճկաստանի պրօտէկտորատութիւնը, բաւական է որ հասկանանք այդ նպատակը և զգուշաբար բայց անխոնջ գործելով օգուտ քաղենք դրանից: Տաճկաստանի ազգային կենտրոնական վարչութիւնը, համարձակուում ենք մեր համեստ կարծիքը առաջարկել, պէտք է կարգադրի նորէն ուղարկել Տաճկահայաստանի գաւառները իր գործակալներին որոնց պարտաւորութիւն պէտք է զարգացնելու պէս ինչպէս հաստատ աղբիւրից դիտենք, իսկոյն վերադառնալով Բայազէթ

հանրութիւնը չի մոլորի ոչ իւր համազգի եղբայր ոմանց այդ միջոցներով հարստանալու օրինակէն, ոչ մեր տեսարց հրովարտականութեան և սահմանադրութեանն խորհրդականութեան և ոչ նոյն մեծ անգղիացի ազգին այդ խաղաղ և խոստմանց երախաւորութեան, այո՛ անբարոյականութեանց մէջ բարոյական ունենալ: Անգղիոյ մէջ Գուալաթոր ինչպէս են, Հայասն նոյնք ըլլալ Տաճկաստանի մէջ փափաքելի էր մեզ Նոյնպէս փափաքելով մեր ազգին աւելի մաքրութեան և բարոյականութեան ուր որ ալ գլուխուր, կը հասնենք անգղիացի նամակագրին բուն ան խօսքին որով իր ատելութեան բուն հոգին յայտնի կը լինի:

«Բարեբաղդորէն հրէայներու պէս՝ հայոց մեծ մասն ալ իրենց երկրէն հեռու կը բնակին»:

Թէ որ կարենայինք հարցնել թէ ինչ զբաղողութիւն կրնար հետելի թէ որ հայք իրենց երկրին մէջ բնակելին, անչաւտ այսպէս մեղի պիտի պատասխանէր թրջամով անգղիացին:

«Մենք երբ քրիստոնէից ոչնչանալը կը տեսնենք թիւրքից մէջ, ուրբա ենք, երբ անոնք ցրուելը կը չօչափենք, գոհ ենք, և ան անոն համար միայն, վասնզի այս երկրին մէջ քրիստոնէի կենսքը թիւրքին մահ կը նշանակէ: Աստմենք (instinct de conservation) պահպանութեան բնազդ անուն կուտանք, և մենք թրջաց պահպանութեան եւանդով ողորդեալ՝ կը զգամք: Կուգրորդ որ թիւրքից միւսլումանէ իզատ բոլոր ժողովուրդը անհետանան ջնջուին և անպարէզ լայն և ընդարձակ միայն անոր մնայ: Եւրոպիոյ մէջ զբաղողութիւնը հոն էր որ սերմիցիք պուլլարք, մոնթէնիկոյցիք, ալպանիցիք, յոյնք ամբողջ չի ջնջուեցան և Եւրոպիոյ Տաճկաստանից երկրէն և գնաց, ուստի մեր յոյժը Ասիոյ Տաճկաստանի վրա էր, հիմա եկանք տեսնել որ Հայաստան անուանեալ երկիրը աշխարհացոյց ներու վրա հայ անուանով քանի մը քրիստոնէս բնակիչ ունի, և այս տեսութիւնը վտանգաւոր կը համարենք, վասնզի այս ալ առիթ մը կրնա լինել այս երկրին տաճկաց ձեռքէն բոլորովին երկուր, ուստի պէտք է որ այս հայերը ճանչցնենք Եւրոպիոյ և ինչպիսի որ տեղը են, աւել

թէ այսուհետեւ նա գտնվելու է մեծ պետութեանց հովանաւորութեան և պաշտպանութեան ներքոյ, այդ պետութիւններից կոնստանդնուպէս և Նիւ-նակէն, որոնք պէտք է հսկեն խոստացած բարեկարգութիւնը անյապաղ իրագործելու, նրանց ճշդութեամբ կատարվելու և քրիստոնէայ ժողովրդին ոչ մի գրկողութիւն չը հասցնելու վրա: Ահա այս ճանապարհով միայն կարելի է գաղթականութեան առաջը առնել, եթէ ոչ Հայաստանում ոչ մի հայ չի մնայ: Այժմ ոչ արդարեւ Հայաստանը կը դառնայ մի պատմական երեւակայական աշխարհ, որ իրականապէս գոյութիւն չի ունենայ, որովհետեւ Հայաստանը հայերով է Հայաստան ոչ թէ քուրդերով և տաճիկներով: Այն ժամանակ դարերի ընթացքում հազիւ հազ յղացած հայոց խնդիրը կը մնայ լոկ խնդիր, երբեք իւր սպասելի լուծումն չի ստանայ և կը մտնի անգլիական արեւելք տանելով իր հետ և հայի ապագան: Եւրոպիոյ իրեն էլ իր կողմից պարտաւոր է հասկանալ Տաճկահայաստանի հային գաղթականութեան դառն հետեւանք: Թող գործող անձինք դաս առնեն անցեալից և գալու շարեաց առաջն առնել չը յապաղեն: Բայց ազգային վարչութիւնը չը պէտք է բաւականանայ միայն գաղթականութեան առաջն առնելով, նա պարտաւոր է և մտածել, հնարքներ որոնել ազատել վտանգից և կտրուածից հայերին այն գաւառներէ, որոնք այժմ բռնված են մեր զօրքով և որոնք Բերլինի դաշնագրութեան համաձայն վերադարձվելու են Տաճկաստանին: Թող ազգային վարչութիւնը փորձված համարի իրան խոնարհ գործած ուժը քաղածով համար և յափառականութեամբ: Նոյնանման վրէժնորդութիւն սպասուում է Բայազէթ և Ալաշկիրտ չըմանելի բնակիչներին: Ազգային վարչութիւնն անպատճառ կանխապէս զգուշութեան միջոցներ, պէտք է բնորոշել ապ Բ. Գրանը և տաճկական կառավարութեանը և այդ երկիրները յանձնելու ժամանակ իր հաւատարմութիւնը պէտք է ունենայ: Միով բանիւ եթէ հարկաւոր գոյութիւնները գործ չը դուրին այս կողմերի, մահաւանդ Բայազէթի քաղաքի բնակիչների կենսքը վտանգի մէջ է: Տաճիկները որոնք այժմ փախած են մասամբ Պարսկաստանի և մասամբ վանալ սահմանները, և որոնք այս քաղաքը Տաճկաստանի կառավարութեանը զարգացնելու պէս ինչպէս հաստատ աղբիւրից դիտենք, իսկոյն վերադառնալով Բայազէթ

ալ տեղի գրիներ նկարագրենք, համարտանենք միայն այլ զրպարտենք նաեւ գրիներ քանի որ չենք կրնար գրիներ անհետացնել: Ո՞րքիտէ այս կերպով Ասիոյ Տաճկաստան ամբողջ կազմաւորել և Եւրոպիոյ իւր բոլոր ընթացից մէջ մինչև Պարսկաստան ծոց անապատ դառնալով, Հնդկաստանի համարայնութեան մէջն բոլորովին կը գոյուի»:

Աս սերուն և աղբիւ խոնարհութեանը արգիւնքն են անա, նախատանցիկ հեղինակը որ մեզ հայոց կը հասնի: Անակնուրեկ պատիւ մեր աղտ և դուր թէ ան, մեր տգիտ ու թէ ան, մեր անբարոյականութեան, մեր ցրուած ծուր թէ ան, մեր սակաւագիտութեան, և ոչ միայն պատիւ ալ մեր ազգութեան անյոյս վիճակին յոյս նաեւ:

Այս յոյս, վասնզի անոնք որ մինչև հիմա անգղիս երկիրներու իշխեր են՝ արեւել են և գաւառան ազգաց ճակտին քրտինքը և արիւնքը քամեր են, այսօր այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուին որ իրենց սրտագին բարեկամները մեր կատարեալ մահաւանդ կենսքը կը յուսան իրենց համար:

Մեր ազգին մէջ թեթեամբ և եղբայրներ ալ ունենք որ զբաղողաբար գրիչ ալ ունին և որ իրենց տունէն մինչև իրենց գրատունը քանի քայլ լինել չի համար և իրենց թաղէն ոտքերնին դուրս չի դրած, քաղիւր և գիրք կը հանեն և առանց լուրջ գրքի մը վրա աչք ձգելու վիճակագրութեան կը շինեն և իրենց ազգին թիւը կը բազմապատկեն, երեք՝ չորս՝ հինգ միլիոնի կը հասնեն: Ասոնց համար է գուշակութիւն «Հեղեղ առ ուսումն և փոյթ ի վարդապետել»: և աս չափազանցութիւններուն փոխարէն է անա անգղիացի բարեկամին 250,000 հայ համիրը (Օսմանեան Հայաստանի մէջ և հետեւաբար շատ անկարող պահանջելու համար իրենց երկիրը:

Սնեք գիտեր թէ ինչ կրնայ պատահել վաղուան ապագային մէջ, աշխարհքի անցեալը հոն կեցած է՝ պատմութիւնը, շատ անգամ տեսնուած է նորա մէջ այնպիսի պարագայներ որ դուրս են ամեն հաւանականութենէ՝ ամեն չափաբերական հայրենիքէ: և այս պարագայներուն ո՞վ որ հրաշք ըսէ չի սխալիր, մեծագոր ազգաց և

վրէժնորդ լինելու են հայերից *) իբր իրանց կրած ձեռաների փոխարէն և բացի սրանից թաւանված և անպատկած հայերի ատելութեանը զէպի իրանց թաւանող և սպանող գրացի տաճիկները չափ և սահման չը կայ, և արդէն հայերը երեւակայում են թէ ինչ խռովութիւններ, կռիւներ և անբաղդ պատանուներ տեղի պիտի ունենան տաճիկների կողմից, միթէ այդ ամեն անկարգութիւնների և երկպառակութեանց առաջն առնելու նախազգուշութեան համար պատրիարքարանը մեծ պետութեանց զեռապատանց միջնորդութեամբ չէ կարող համաձայնացնել Բ. Գուաթ որ այդ տաճիկներին արգելու էր վերադառնալ Բայազէթ եթէ ոչ բոլորովին գոնէ առ այժմ: Այս մի դժուար հարց չէ իմ կարծիքով, որովհետեւ տաճիկների տները համարեա թէ բոլորովին քանդված են մասամբ Բայազէթի պաշարման ժամանակ, մասամբ էլ յետոյ:

Մ. Տէր-Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ
Մարտի, 12 օգոստոսի

Կարգաւոր ձեռ լրագրի մէջ, որ յօդուտ Արարտեան ընկերութեան նախարարութիւններ են ժողովում, հարկաւոր համարեցինք ժողովել և այստեղ բայց տարաբաղաբար, չը կամեցան մասնակցել մի քանի հարուստ վաճառականներ այդ պատուական գործին, ուղարկելով ձեռ 15 րուր խնդրեմ տպագրէք նախարարութեանը անունները: Ստեփան Բուստովանեանց 1 րուր, օրիորդ Մարիամ Նազարեանց 1 ր., Պետրոս Միլիթարեանց 1 ր., Մակար Արէխեանց 1 ր., Գրիգոր Էստատեանց 2 ր., Գարբիէլ Դանջուեանց 1 ր., Լուսանկար Յովհաննիսեանց 1 ր., Գեորգ Բաղդադեանց 1 ր., Զաքարեա Ասամազեանց 1 ր., Գրիգոր Նազարեանց 5 ր.:

Գրիգոր Նազարեանց

*) Տաճիկները ոչ թէ միայն հայերից կողմաւորաբար վերադարձնել մտադիր չեն, այլ և վրէժնորդութեան սպառնալիքներ են ուղարկում հայերէն հայրենիքը: Եւրոպիոյ տաճիկ տան իւրաքանչիւր գերանք հայերի վրա մի մարդու կենսք պիտի նստի:

ինքնակալութեանց և նոցա մայրաքաղաքաց հետք չեն մնացել, երբ անդին նոցա հայատակ և աննշան ժողովուրդը դեռ կան ու կապրեն և կերան. ասոնցմէ ենք մենք հայերս ալ, ոչ զիտէ հրաշք մը դեռ մեզի ալ չէ պահուած, ոչ զիտէ թէ ապագան չունի տեսակ մը բարեբաղդ կարելութիւն մեզի համար, մեզի տկար՝ աղքատ՝ թշուառ՝ աղտոտ՝ տգիտ՝ ցանուցիւր ժողովուրդեան համար: Եւ եթէ յանկարծ նախախնամութիւնը իր հըզով թեկը տարածէ մեր վրա, կարելի չէ որ աղքատները բարեկեցիկ լինին, տկարները զորանան ցանուցիւրները ժողովուն՝ աղտոտները մաքրուին՝ զգուշիւնը տանելի լինին:

Բայց կրնան մեզի առարկել, թէ «հին աշխարհի բազմադարեան և երեւակայական ժամանակաց մէջ չենք, ուր տեսնել ենք ներկայ օրերուս այդպիսի երազի մը իրանալը: Բայց մի գուցէ յունաց օրինակը մեզի յիշէ, վասն զի դուք ասիական բարբարոսները նոցա հետ բաղդատուելու մարդիկ չէք, նոքա մեր նախահաջն էին, վասն զի քաղաքագիտութեան ծնողքն էին, մեր վարժապետներն էին, վասն զի ուսմանց և գիտութեանց պապերն էին. դուք ձեր վիճակին յարմար օրինակ մը մեզի ցցուցէք որ լսելի լինի»:

Չանանք ուրեմն այնպիսի օրինակ մը ցցոյ տալ և այնպիսի մօտ ժամանակի դիպումը մը որ բաղդաց յայտնի է և որուն կենդանի վկայքն ալ կեցած են, իսկ որոնք չեն գիտեր կը տեղեկանան:

Խրիմի պատերազմէն վերջը երբ կողկաս՝ բոլորովին նուաճվեցաւ և Շամլի ընտանեօք գերի գնաց Բեղդադուրի, յայտնի է չեքեքները սկսան թիւրքիա գաղթել, և օսմանեան տէրութիւնը գրեկնք տեղաւորելու համար թէ Եւրօպա և թէ Ասիա ինչպիսի հոգ և խնամք տարաւ:

(Կը շարունակվի)

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Արաս-Թուման, 2 օգոստոսի

Յանգուցեալ մայրս՝ Մանուկ խանութ-Մարգարիտ Տիգրանեցի-Բարախանց, իր մահուանից քանի օր առաջ լսելով ձեր լրագրի միջոցով Վարարատեան ընկերութեան մասին, որոշեց իր կողմից 50 ռուբլ նուիրել այդ ընկերութեան, որ և ահա ուղարկում եմ ձեր տնօրինութեանը։ Մայրս չափ հետաքրքիր էր և կարոյց ուսումնարանաց միջակին, որ իր ծննդեան տեղին է։ Յանկայի է այժմ խնայալ, կայ արդեօք կարս քաղաքում օրիորդաց դպրոց (հայոց ձիական)։ Եթէ կայ նրան բարեկարգ միջակի մէջ գնելու ձգտում ևս կայ ժողովրդի և տեղիս առաջնորդի կողմից...

Աւետիք Բարախանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուս. գաւառի ՇԱՀՆԱԶԱՐ գիւղից մեզ գրում են, որ այդ գիւղի բնակիչները, որոնք հայ կաթօրկիներ են, իրանց մէջ փող հաւաքելով այդ գիւղի կալուածատիրոջից դեռ 1877 թ. զեկտեմբեր ամսին գնել էին 3157 դեխաւին հող 31570 ռուբլով։ Գիւղացիների դրութիւնը մի տարվայ ընթացքում այնպէս բարւոյց-վեցաւ սեփական հող ունենալուց, որ նորերումս կարողացան գնել դարձեալ 2532 դեխաւին հող 28952 ռուբլով։

Հին-ՆԱԽԻՋԵՆԻՍ Կ. կարապետ Աղա-մանից Արարատեան ընկերութեան համար ստացանք երկու ռուբլ։

ԱՐԱՎԻԿԱԲԵՐ գրում են, որ չընկալալ գիւղերի քահանաներից մէկը աշխարհականի շոր հագած կառապանութեամբ է պարապում։ Բնկերները նրան տրեպցու N: են կանչում։

Օգոստոսի 13-ին կիրակի օր, չալաքարի Ս Մինաս եկեղեցու ժողովրդականները հաւաքվելով նոյն եկեղեցու ուսումնարանում, քննում էին այդ եկեղեցու երեք քահանաների վէճերը։ Ժողովի մէջ յայտնվեցաւ, որ այդ քահանաներից հ. Սարգիս և հ. Խախանեանցը բոլորովին չեն ճանաչում իրանց կողմը և բոլորովին չ'աշխատում են գործ դնում իրանց պարտաւորութիւնները։ Որինակ հ. Սարգիսը իւրաքանչիւր օր գնալով աշխարհի մէջդանը իմանում է հացի և գարու գները և մի քանի օրով անհետանում է քաղաքից և գնալով դա-նազան գիւղեր գնում է աշխարհի գարի և վերա դառնալով Թիֆլիս ծախում է աւելի թանկ գը-ներով մի խոսքով չարչիւթիւն է անում, որ բոլորովին վայել չէ մի քահանայի Բացի դը-րանից նա իր ձեռքն է գցել ժողովրդի բոլոր հարուստ դասակարգը, զրկելով միւս քահանա-ներին։ Իսկ ինչ որ վերաբերում է հ. Խախանեա-նին, ժողովրդի մէջ յայտնվեցաւ, որ նա ևս ա-ռանց ժողովրդի հաւատութեան իր հայրենի ճիւղի վրէժը գնալով մնում է ամիսներով և առաւ անձնը վերջացնելուց յետոյ վերա դառնում է Թիֆլիս նոր հունձ անելու։ Իսկ հ. Գնուկին որ նշանակված էր հ. Խախանեանցի տեղը ժամանակաւորապէս, ստիպւած է առանց տեղի մնալ միջոց չունենալով կերակրել իր բաղ-մաթիւ երեխաներին։ Ժողովրդականները այս բոլորը աչքի առաջ ունենալով, յայտնեցին, որ նոքա չեն կարող երեք քահանայ պահել իրանց եկեղեցում և որ նոքա ցանկանում են հ. Գնու-նուն ունենալ իրանց քահանայ, իսկ ինչ որ վե-րաբերում է հ. Խախանեանին և հ. Սարգսին թող մէկը գրանցից հրաժարական տալ։ Գար-ձնում ենք հոգեւոր իշխանութեան ուղարկութիւնը այս հանգամանքի վրա և մենք յոյս ունենք, որ նա կը յարգէ ժողովրդի ցանկութիւնը նշանա-կելով հայր Գնուկուն և հրաժարեցնելով այն երկու քահանաներից մէկին։

Լուս. ենք որ ամսիս 14-ին, երեքշաբթի օրը, Թիֆլիսի ուսաց Սիօնի մայր եկեղեցու տօ-նին, եկեղեցու մէջ տեղ կախած մեծ ջարդ վայր է ընկել և տակն է արել երկու կին։ Նրանցից մէկի գլուխը ջարդվել է, իսկ միւսը թեթև կեր-պով վիրաւորվել է։ Ասում են որ առաջին կնոջ կեանքը վտանգի մէջ է։

Լուս. ենք որ Թիֆլիսի չընկալալում գտնված մի գիւղում Թիֆլիսի մի եկեղեցու

քահանաներից մէկը, որ կապալով մէկ այգի ունի վերցրած վերոյիշեալ գիւղում, սովոր-ութիւն է առել ամեն շաբաթ ձուկ գողանալ ձկնորսներից։ Նրկար ժամանակ ձկնորսները չեն կարողանում գտնել ձկան գողին, բայց երբ տես-նում են որ մեծ վնասներ են կրում, վճռում են ծածուկ հսկել գողին։ Նրբ արժանապատիւ հայրը իր սովորութեամբ նշանակած օրը գնում է իր որսը անելու, ձկնորսները իսկոյն բռնում են նրան և կամենում են կապել. բայց քահանայի աղերսանքին զիջանելով, գլուխ չեն բերում իրանց դիտաւորութիւնը, այլ խլում են նրա-նից 50 ռուբլու վէկսեւը և բաց են թողում։ Այժմ փողոցներում քահանայի ետեից կան-չում են ձկան գող...

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԱՎՖԵՏ-ՓԱՇԱՅԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

(Շարունակութիւն և վերջ)

1852 թ. աշիւնին այդ նախնային, առանց որ և է պատճառի, ենթարկվեցան յունաց երկու զորաբաժինների յարձակման, որոնք այնտեղ այնպիսի վրդովեցուցիչ զազանութիւն-ներ կատարեցին, որ Անգլիան և Ֆրանսիան՝ զրանց վերջ գնելու համար, ստիպված էին իրանց զօրքերով գրաւել Պիւթէյ և Աթէնք։ Քսան և հինգ տարի հանգիստ ժամանակա-միջոցից յետոյ Եպիրոս և Թէսալիա նահանգ-ները նորից յուզվեցան թշնամական գործո-ղութիւններով հրապարակապէս, նոյն իսկ հելլենական կառավարութեան աչքի առաջ։ Հելլենական կամառօրների խումբեր մտան մինչև այդ ժամանակը խաղաղ և հանգիստ երկր-ներ և կրակով և սրով ստիպեցին բնակիչնե-րին (Բ. Գուռը կարող է այդ հաստատել) ապստամբվել օրինաւոր իշխանութեան դէմ։ Բաղդաւորապէս այս դաւադրութիւններին ընդդիմանում էր բնակիչների խոհմութիւնը։

Աթէնքի կառավարութիւնը նեղացած մի կողմից իր առած փորձերի անպատել մնալուց, միւս կողմից Ռուսաստանի բացառութիւնից մասնակից անել նրան պատերազմի հետեւանք-ներին և տեսնելով, որ յաջող դէպքը նրա ձեռքից գնում է, վճռեց, խաղաղ ժամանակ, երբ կայսերութեան համար անցաւ Ռուսա-տանի հետ ունեցած պատերազմի ամենակ-րիսիկական քաղաք, յարձակվել իր զօրքերով Օսմանեան պետութեան երկրներին վրա, որ զբաւի այն նահանգները, որոնց Գնուկին անուանում է Յունաստանի ազգային ձգտման առարկայ։ Գնուկ թագաւորը, ինչպէս ասում են, յետ կանչեց իր զօրքերը համաձայն արե-մտեան մի քանի մեծ պետութիւնների պա-հանջին։ Թող այդպէս լինի։ Բայց միթէ կա-ռավարութիւնը այդ փաստի հիման վրա կա-րող է պնդել, որ պետութիւնները Յունաս-տանի հնազանդութիւնը վարձատրելու հա-մար, պարտաւորվեն տալ Յունաստանին Օս-մանեան պետութեան նահանգները։ Պետու-թիւնների այդպիսի վարմունքը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Յունաստանին ուղղած մի հրաւերը վերջ գնել այդ դաւադրութեանը միջազգա-լին իրաւունքի դէմ, ուրիշ ոչինչ։

Պ. Գնուկինից կոնգրէսին ներկայացրած միւս ապացոյցները, այսինքն, որ յիշեալ նա-հանգների բնակիչները միշտ անհամբերու-թեամբ տանում էին օսմանեան տիրապետու-թիւնը, որ նրանք անդադար ապստամբվել են իրանց անկախութիւնը ձեռք բերելու համար և որ միայն մի ցանկութիւն ունեն, այն է միանալ յունաց թագաւորութեան հետ, այդ բոլոր ապացոյցները ինքնանք ոչնչանում են, եթէ ի նկատի առնենք վերոյիշեալ պատ-ճառները։

Քննչականաւ կը հաստատված է որ բնա-կիչները խաղաղ ապրում էին և կամաւորա-պէս հպատակվում էին օսմանեան տիրապե-տութեանը, որ նրանք իրանց հեղինակու-

թեամբ երբեք զէնք չէին առնում, որ նրանք միայն երբեմն հնազանդութիւն էին Յունաստանի միջամտութեանը, որ նրանք երբեք չէին խնդրում այդ միջամտութիւնը և եթէ ազա-տված լինէին իրանց զրացնների փառասի-րութենից, նոքա շարունակաբար խաղաւոր կապէին սուլթանի գայտօնի տակ։

Քարձր ժողովի համակրութիւնը դէպի իր գործը գրաւելու համար, պ. Գնուկին հաս-տատում էր որ Եպիրոսի և Թէսալիայի Յու-նաստանի հետ միացնել այդ թագաւորու-թեան համար բաղդաւորութիւն կը լինէր։ Բ. Գուռը առիթ չունի քննել այդ իր հա-մար օտար հարցը։ Մեծ պետութիւնները, որոնք ուսումնասիրել են այդ թագաւորու-թեան պատմութիւնը և զարգացումն զրա հիմնելու օրից, կարող են առել, կարող է արդեօք երկրի ընդարձակումն հաստատու-թիւն և խաղաղութիւն տալ Յունաստանին, անհնարելով նրա կատարել փառասիրու-թիւնը։ Բ. Գուռը այս կէտի վերաբերու-թեամբ կը յիշեցնի միայն, որ քաղաքական ազնուութիւնը չէ թոյլ տալիս կողպտել մի ազգութիւն յօգուտ միւս ազգութեան այն պատրուակով, որ այս վերջինը այդպիսով կը բաղդաւորվի։ Պ. Գնուկինի վերջին և իր կարծիքով ամենազիւտաւոր ապացոյցը այն է, որ իր կառավարութեանց պահանջած երկր-ների միացնելը վերջ կը գնէր ամեն տեսակ տնտեսականութիւններին Բ. Գրան և Յու-նաստանի մէջ։ Բայց նա ինքն ոչնչացրեց իր պատրուակներին նշանակութիւնը յունիսի 29-ին կոնգրէսում կարգացած յիշատակա-գրով, որտեղ ասված է, թէ հելլենական կա-ռավարութեան միակ և իսկական ցանկու-թիւնը միշտ համեմատ է եղել ամբողջ ազգի ցանկութեան հետ, որի մէջ Յունաստանը կազ-մում է փոքրիկ մասը։ Այս յայտնութեանց երևում է, որ յիշեալ կառավարութիւնը ի նկատի է ունեցել մի պետութիւն կազմել այն բոլոր երկրներին, որոնք յոյներով են բնակեցրած։ Պ. Գնուկին աւելացնում է, ռո-րովհետեւ Յունաստանի բոլոր ձգտումների ի-րադրծելը շատ դժուարութիւնների է հան-դիպում և որովհետեւ Ներօպան վճռել է ա-րեւելքում խաղաղութիւն հաստատել առանց մեծ փոփոխութիւններ անելու, այդ պատճա-ռով հելլենական կառավարութիւնը առ ժա-մանակ բաւականանում է սահմանակից նա-հանգների և Կրիտ կղզու Յունաստանի հետ միացնելու պահանջով։ Այս խոստովանու-թիւնը եթէ ի նկատի առնենք, ի՞նչ տեղ կը մնայ ապագայ խաղաղութեան յոյսը։ Այս խոստովանութիւնը արդեօք չէ նշանակում, որ մի քանի տարիներից, գուցէ ամիսներից յետոյ, եթէ Յունաստանը միջոց կունենայ, նա կը սկսի նոր արշաւանք իր սահմանները զարձեւ ընդարձակելու նպատակով։ Պ. Գն-լանիսի խոստացած խաղաղ ժամանակամի-ջոցը կը տեւի այնքան, ինչքան ժամանակ հարկաւոր կը լինի միջազգային իրաւունքի դէմ նոր ձեռնարկութիւններ պատրաստե-լու համար։ Բ. Գուռը Ներօպայի ուղարկու-թիւնը դարձնում է գործերի դրութեան վրա նայելու և պետութիւնների իրաւունքները ի նկատի առնելու այս օտարօտի, նոր ձեռք վրա։

Վ. յայտնի գիտողութիւնները պարտաւո-րում են Բ. Գրանը բողոքել Ներօպային Յու-նաստանի ընդարձակելու դէմ։

Նորին մեծութիւն սուլթանը և նրա կա-ռավարութիւնը հաստատ համոզված են, որ մեծ պետութիւնները ծանօթանալով Աթէնքի կարելնտի պահանջների բնաւորութեան և հետեւանքների հետ, կը փոխեն իրանց նախ-կին կարծիքը և խորհուրդ կը տան հելլենա-կան կառավարութեանը հետո մնալ այդ-պիսի վտանգաւոր և անքաղաքական ձեռ-նարկութիւնից։

ԹԻՐԻՔԻՍ

«Times» լրագրին, օգոստոսի 13-ին, Կ. Պոլսից հեռագրում են հետեւեալը. Վասումեն որ Ռուսաստանը մէկ շրջաբերական ուղարկեց Բ. Գրան, որի մէջ յայտնում է, թէ ռուսնե-րը չեն հեռանալ Թիւրքիայից մինչև որ կօն-գրէսի վճիռները, Յունաստանի սահմանների ուղղվելու հետ միասին, Թիւրքիան չը կտոտ-րէ։ ձգնարիտ է, որ իշխան Լօրանով-Լօստօ-վսկի զիմեց շրջաբերականով մեծ վեղերին, բայց նրա մէջ մի խօսք էլ չը կայ յունաց հարցի վերաբերութեամբ, այլ յայտնվում է միայն, որ ռուսաց զօրքերի նշանաւոր մասը պատրաստվում է դուրս դալու։ Գնուկինը Տօ-ալէքէնի խօսքերով, զօրքերի նաւերի վրա նստեցնել կսովել եկող շաբթին Սան-Ստէ-ֆանոյում, Սիլվիլիայում, Նիքիլիում և Բօ-դոստոնում։ Այս նպատակով այս բոլոր կէտե-րում արդէն պատրաստութիւններ են տես-նում։ Ռուսաց կարծիքով, հէնց մի և նոյն ժամանակ անդրական նաւատորմն էլ յետ կը քաշվի իր կէտերից Կ. Պոլսի առաջ, և այս մտքով Ռուսաստանի կողմից արդէն պաշտօ-նական առաջարկութիւն է արած, բայց բը-րիտանական կառավարութիւնը այս կէտի վե-րաբերութեամբ չէ հաղորդել դեռ ևս իր դիտաւորութիւնները։ Բացի դրանից ռուս-ները խօսք են գցել Բ. Գրան մօտ, որ նա խօսք տալ մի քանի ժամանակ չամրացնելու Չէկմէջէ-Կէրկօս գիծը, բայց այդ բանը շատ վատ են ընդունել Թիւրքերը։ Լիվանի նահան-գապետ Բուստէմփաշան ինձ լրագոր իրա-ւունք է տուել վերջնականապէս հերքել նո-րերումս անգլիական մամուլի միջ երեւցած լուրերը, որ իբր թէ Լիվանում ծանր անկար-գութիւններ են ծագել, և իբր թէ ապս-տամբները տեղական նահանգապետին պաշա-րել են իր պալատի մէջ։ Ներկայումս Բուս-տէմփաշան Կ. Պոլսի է և այս օրերս ճանապարհ է ընկնում դէպի Լիվանիա իր պաշտօնը ընդունելու համար։ Մանր բան կարելի է անուանել միայն դրուզների և մարօ-նիտների միջ եղած փոքր գրգռումները։ Յուգ-մունքը կանգնեցնելու համար, Բուստէմփա-շան տեղական հիւպատոսների և Կ. Պոլսի Ֆրանսիական դեսպանութեան համաձայնու-թեամբ հրամայեց բանտարկել և Նրուսաղէմ աքսորել մարօնիտների եպիսկոպոս Բօստա-նիին, որը մի քանի տարի շարունակ երկպա-ռակութեան սերմեր և գրգռումներ է ցանում դրուզների և մարօնիտների մէջ։ Այդ բանի դէմ բողոք յայտնվեցաւ, որի մէջ ցոյց է տը-վում որ եթէ այդ որոշումը կատարվի, այն ժամանակ կը քանդվի քրիստոնեայ եպիսկո-պոսների նշանակութիւնը։

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10նոյն, 14/26 օգոստոսի։ Եթէ Աֆգանիս-տանի Էմիրը կը շարունակէ իր թշնամական տրամադրութիւնը Անգլիայի դէմ, Հնդկաս-տանի կառավարութիւնը կը փակէ Կէլքա-րեան անցքը և կողմէ հիւսիս-արեւմտեան սահմանը։ Standart լրագիրը ասում է որ լաղերը նորից պատրաստութիւն յայտնեցին չընդգիմանալ Բաթումի ռուսաց զօրքերով գրաւելուն, եթէ այդ նահանգին աւտօմօմ տրվի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 60 Կ., երկրորդ 95 ռ. երրորդ 95 ռ. 25 Կ., չորրորդ 95 ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակ արժէ 236 ռ., եր-կրորդ 236 ռ. 15 Կ., արեւելեան 92 ռ. 50 Կ., ոսկի 7 ռ. 86 Կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25 1/2 պէնս, ռուսաց 100 ռ. Գերմանիայի վրա արժէ 216 մարկ, Փարիզի վրա 266 ֆրանկ։ Տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 օգոստոսի։ Թագաւոր Կայսրը բարեհաճեցաւ ուղեւորվել դէպի Դրիմ։

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ինձ յանձնված լինելով ԼԳՈՒ-
ԼԻՍԻ ԵՐԿՍՆՈՒ ԴԳՐՈՑ-
ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՈՒՄ
ՊԵՏՆԵՐ վարձել, խնդրում եմ
ցանկացողներին պայմանները մա-
սին խօսելու դիմել «ՄՇԱԿ»
խմբագրատանը, իսկ օտարաբան-
քացիք կարող են իրանց ցանկու-
թիւնը յայտնել նամակով: Ըն-
յարմար համարվածներին չե պա-
տասխանվի:

Յ. Մէլքե-Յակոբեանց

Օգոստոսի կէսից լոյս կը տեսնեն Ս. ՄԱՆ-
ԴԻՆԵԱՆԻ հետեւեալ նոր աշխատասիրութիւն-
ները:

- 1) Ընթերցարան հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵ-
ՏԱՎԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երրորդ տարվայ
ՈՒՍՄՈՒՆԻՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆԻՔ» անունով:
 - 2) «ՀԱՄԱՌՈՏ ՄԱՆԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ»:
- Ցանկացողները ստանալ յիշեալ գրքերը իր
ժամանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՅԸ» կամ Զար. Գրիգորեանի
գրաւաճառանոցը: 2-3

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅԱՌԱ-
ՆՈՅՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՂԼԵՐԵՈՒՄ)

Վաճառվում են հետեւեալ նոր հրատարա-
կութիւնները:

1. Նախակրթանք հայերէն գրաբար
եղուի, աշխատ. Գ. Արք. Ավագեան, չորրորդ
տիպ, ճոխագոյն քան առաջինները: Գինն է 40
կոպէկ:

2. Սկզբունք Քրիստոնէական հա-
ւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ համառօտ
գաղափար սրբազան պատմութեան և քրիստո-
նէական վարդապետութեան ծխական-տարրա-
կան ուսումնարանների համար, բազմաթիւ գե-
ղեցիկ պատկերներով զարդարված, աշխատասի-
րութիւն Ստեփաննոս քահ. Տէր Ստեփաննոս
Գինն է 50 կ:

Վերոյիշեալ գրքերն ընդունված են իբրև դա-
սագիրք Թիֆլիսի ինքն. պ. ինքնակազմ վերադաս-
չից, վաճառվում են բացառապէս կենտրոնա-
կան գրաւաճառանոցում: Գումարով և կանխիկ
դրամով գնողներին նշանաւոր գիշումն է լինում:

3. Մամուլի տակից դուրս եկաւ և այս օրերս
կը սկսուի վաճառուի պ. Վաղարոս Աղայեանի
«Ուսումն մարդկին լեզուի» անունով դասագրքի
երրորդ տպագրութիւնը, տպագրված ամենա
պատուական թղթի վրա: Գինն է 15 կ:

Նոր տպագրութիւնը վաճառվելու է միմիայն
կենտրոնական գրաւաճառանոցում: Պատուէր-
ները ընդունվում են:

Ի. Ա. ՄԵԼԻՔ-ԲԵՂԱՐՈՎԻ ՄԱՆՆԱՌՐ
ԲԵԱՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ:

(Թիֆլիս, Սաղօվայեա փողոց, տուն Պ. Ի.
Շաղինովի, № 34)

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է լեւալկան ուսումնարան,
վերադասական դիմապիսա և միւս ուսումնարան-
ներ մասնաւոր համար:

Ուսումնարանի կուրսը համապատասխան է
պետական լեւալկան ուսումնարանների կուր-
սին:

Ներկայ ուսումնական տարվայ սկզբին բաց-
վում է 4-դ դասատուն:

Ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն
օգոստոսի 21-ից, իսկ ուսումը կը սկսվի սեպ-
տեմբերի 1-ին:

Պայմանների մասին կարելի է տեղեկանալ
ամեն օր մասնաւոր լեւալկան ուսումնարանում:

3-3

Առանձնապէս ՊԱՐԱՊԵՒՄ ԵՄ աշակերտներ
պատրաստելով բոլոր ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ-
ՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Պատրաստում են ԵՐ-
ԲՐՈՒՎ կարգի կամաւոր մանուկներին:
Նախընտանց փողոց Վեցելի գործարանին
կից, ՏՈՒՆ ԳՈՒՄԻՆԵՎՍԿԱՅԻՆ, № 1.

3-5

ՄՈԶԳՈՒԿԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱ-
ՐԱՆՆԵՐՈՒՄ հարկաւոր են մի ՈՒՍՈՒՄՆԱՀ հա-
յոց լեզուի և մի ՎԱՐՈՒՆԻ: Նոյն տեղի
ՔԱՂԱՔԱՅԻՆ երկսեռ ուսումնարանների հա-
մար հարկաւոր է մի ուսուցիչ ՀԱՅՈՑ ԼԵ-
ՋՈՒԻ տարեկան 600 ռուբլ ռոմիով չաբա-
թական 17 դաս: Ցանկացողները կարող են
մանրամաս պայմանները իմանալ «ԿԵՆՏՐՈՆ-
ԱԿԱՆ ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՅՈՒՄ, ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԳԱՂԼԵՐԵՈՒՄ»:

Գաբրիէլ քահանայ Տուրքայեան

3-4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ իր ներկայութեամբ ներկայ
օգոստոսի 12-ին նշանակած է անուրդ առանց
կրկնաճուրղի 55 քառակուսի քաղաքային դա-
տարի հող ծախելու համար, որ գտնվում է Թիֆ-
լիսի 2-դ բաժնի 15 մասնում:

2-2

«ՀՈՐՏՈՒԹԱՆ ԻՐԱՆԻՆԻՔՆԵՐ ՎՐԱՍԱՆՈՒՄ»
Պատումով Քաղաքային տնտեսական, ուսանող լե-
զուով, ծախվում է Բերկնաւորի գրաւաճա-
ռանոցում, Թիֆլիսում, Գործարանի պրոս-
պեկտի վրա: Գինն է 75 կոպ. փոստի ծախ-
սով 80 կոպէկ:

3-6

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՂԼԵՐԵՈՒՄ

ՀԱՏ ԻՃԵՆ ԳԵՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ, ԵՆ ՏՐՎՈՒՄ

ԽԵՆՈՒԹՆԵՐԸ

Կովկասի ՄԱՆԿԱՎԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ յայտնում է հետեւեալ: ՄԱՆԿԱՎԱՐՁԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ մտնել ցանկացողները պէտք է խնդրէ ներկայացնել բժշկական մասի կա-
ռավարչի անունով (Սաղիւրայա փողոց, իշխան Անդրոնիկովի տուն):

Մանկաբարձական արհեստի բարձր կուրսեր մտնելու համար, որ իրաւունք է տալիս ստա-
նալ մանկաբարձի վկայական և մտնել պետական ծառայութիւն իբրև քաղաքական և գաւառա-
կան մանկաբարձի, որ տալիս է բժշկական կանոնադրութեան յօդ. 541 մէջ յիշված արո-
նութիւնները, պահանջում է գիտնալ, ուսաց լեզուից ուղիղ կարգաւ և գրել, պատմել
կրաւոր և բերանացի կարգաւ, թուարանութիւնից չորս գործողութիւնները (գումարում,
հանում, բազմապատկում, և բաժանում), անունական թուեր և հասկացողութիւն կո-
տորակներէ: Իսկ նրանցից, որոնք կը ցանկանան մտնել ստորին կուրսերը, որոնք աւարտելուց
յետոյ կը ստանան գիւղական մանկաբարձների վկայականներ, պահանջում է ուսանողից
կարգաւ և գրել և բերանացի պատմել կարգաւ:

Ինչպէս առաջինները նոյնպէս և վերջինները պէտք է 16 տարեկանից փոքր և 30 տա-
րեկանից մեծ չը լինեն:

Խնդրէր հետ պէտք է լինեն մեարիկական և ծնողների կամ ամուսնի (եթէ մտնողը
ամուսնացած է) թոյլատուութեան վկայականներ:

Թոշակադրամը հետեւեալն է. երթելէ աշակերտութեան տարեկան 40 ռուբլ, իսկ գի-
շերօթիկներէ, որոնք բոլոր հոգսերը ուսումնարանը կը տան, 240 ռուբլ և միանուագ
60 ռուբլ սկզբնական ծախսերի համար:

Ցարեկան թոշակադրամը մոնետ է սկզբից և չէ վերադարձնում, եթէ որ և է պատ-
ճառով աշակերտութեան ուսումնական տարվայ ընթացքում թողնէ ուսումնարանը:

Ուսման կուրսը երկու տարվայ է:

Մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ ԿՈՎԿԱՍԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՁԱԿԱՆ ՈՒ-
ՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ:

2-6

ՄԱՐԻԱՄԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ օրիորդաց ու-
սումնարանում ուսումը սկսում է Սեպտեմբրի
2-ին, իսկ աշակերտութեան ընդունելը օգոստոսի
20-ին: Անցեալ տարվանից բացառած են երեք
պատրաստական և մէկ առաջին. այս տարի
բացվում է երկրորդ դասաւորումը: Պրոգրամի
և աշակերտութեան ընդունելու մանրամասն պայ-
մանների մասին կարելի է տեղեկութիւն ստա-
նալ ուսումնարանի տեսչից:

1-3

Ամենակարճ միջոցով դուրս կը գալ տպագ-
րութեանց երեք, այն է՝ ուսանողի, քրտնաբերի և
հայերէն լեզուներով մեր՝ «Կովկասի հիմն. Կ.
վան լրագիրներ» անունով բրոշյուր: Իրա-
տպագրութեան համար բաց արինք յատկապէս
Տէր-Յովնանիսեան կանդիդատուրայի, որ գտն-
վում է «Լոնդոն» հիւրանոցի կարգում, կամաւոր
ստորագրութիւն:

Գրիգոր Տէր-Մելքիսեդեանց

1-3

ՕԳՈՍՏՈՍԻ 17.

Տ Ե Ղ Ե Վ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՅԱՌԱՆՈՑ		Բ. Կ.		ՀԵՐԱՆԵՐ		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ՌՈՒՂԻ		ՓՈՍՏ		ԲԺՇԿԱՆՈՑ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	
(Օգոստոսի 16-ին)													
Ոսկին (պոլտիսկերիայը)	8	—	—	Կովկասի և Ան-	—	Թիֆլիսից մինչև Փոթի	—	Ամեն տեսակ թէ նա-	—	Հիւանդների ընդունելու-	—	— ՀԻՆ-ԲԱՅԱՌԱՋԻՔ. Մ. Տ. Պ.	—
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1540	—	—	դիկովկասի քա-	—	(ճանապարհորդների գնացքը) 9	—	թէ ծանր փոստ ամեն տեղ	—	յունիսի 1-ց մինչև սեպ-	—	Ստացանք նամակը և իսկոյն	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1278	—	—	ղաքները	1	ժամին 21 րոպէ առաւօտեան	—	ուղարկելու, ընդունվում	—	տեմբերի 1-ը:	—	տպարան ուղարկեցինք: Այդ	—
Վիգրիչին 50/0 առաջի փո-	233	—	—	Ռուսաստան	2	Մինչև Միխայլով (խառն	—	են ամեն օր, առաւօտեան	—	Երկուշաբթի. Վէրմի-	—	կարգաւ ժողովներում: Այնպես-	—
խառնութեան տոմ. 100 „	235	—	—	Աւստրիա	3	Մինչև Միխայլով (խառն	—	8 ժամից մինչև 1 և կեսօրից	—	հիւանդութիւններ, Գուշա-	—	գէ. օր «Մշակի» մէջ հայերի	—
Երկրորդ 50/0 վիգրիչին „	235	—	—	Անգլիա	4	գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18	—	յետոյ 3 ժամից մինչև 7:	—	նիւրի ձեռագիրական մասը	—	վերաբերութեամբ գրուած յո-	—
Մարտիկի կուրսը 267 „	100	—	—	Ֆրանսիա	2	րոպէ:	—	Իսկ կիրակի օրերը հասա-	—	նիւրի ձեռագիրական մասը	—	գումաները որքան կարելի է	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի	—	—	—	Ֆրանսիա	3	—	—	թակ նամակներ մինչև 10	—	10-ից մինչև 11 ժամ:	—	չատ կարդալիքն:	—
վրա.	9	32	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	Երեքշաբթի. Վէրմիչէվ	—	— ԱՍԽԱՎԱՐՔ. Խ. Մ. Ստա-	—
վենայի կուրսը ամէ 112 զ:	100	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	ներքին հ. Բախտ վենե-	—	ցանք նամակը: Երեկ կը տպե-	—
Նաւերի յարաբ. 5	90	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	րական և կաշու հ. Ա. Բա-	—	Այդպիսի նամակներ չեն հնա-	—
Աւստրական բանկի ակ-	315	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	խառնով կանանց երեխա-	—	յում:	—
ցիան 200 „	—	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	ների հ. և մանկաբարձու-	—	— Երեկ կը տպե-	—
Փոթի թիֆլիսեան երկա-	101	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	թեան: Պէտքով աչքի հ.:	—	— Երեկ կը տպե-	—
թուղու ակցիան 125 մ.	—	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	Չորեքշաբթի. Վէրմի-	—	— Երեկ կը տպե-	—
Շաքարի բրոջկու	7	40	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	չէվ ներքին հ. Բախտ	—	— Երեկ կը տպե-	—
„ միւս տեսակը	7	25	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	րական և կաշու հ. Ա. Բա-	—	— Երեկ կը տպե-	—
„ չաքարաւաղը	5	70	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	խառնով կանանց երեխա-	—	— Երեկ կը տպե-	—
„ տրանզիտը	6	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	ների հ. և մանկաբարձու-	—	— Երեկ կը տպե-	—
„ մաքուր վնարած	11	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	թեան: Պէտքով աչքի հ.:	—	— Երեկ կը տպե-	—
Բամբակի երկանու Ա-	—	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	Չորեքշաբթի. Վէրմի-	—	— Երեկ կը տպե-	—
մերկայի սերմից.	8	20	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	չէվ ներքին հ. Բախտ	—	— Երեկ կը տպե-	—
Միւս տեսակը հին սերմից.	7	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	րական և կաշու հ. Ա. Բա-	—	— Երեկ կը տպե-	—
Բուրգը թուշի	8	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	խառնով կանանց երեխա-	—	— Երեկ կը տպե-	—
Թարաւամի	4	20	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	ների հ. և մանկաբարձու-	—	— Երեկ կը տպե-	—
Ալիւր Երազալու	1	80	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	թեան: Պէտքով աչքի հ.:	—	— Երեկ կը տպե-	—
„ երկանի	—	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	Չորեքշաբթի. Վէրմի-	—	— Երեկ կը տպե-	—
„ Գարին	1	30	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	չէվ ներքին հ. Բախտ	—	— Երեկ կը տպե-	—
Մոմը բնածաղկի (creap.)	12	60	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	րական և կաշու հ. Ա. Բա-	—	— Երեկ կը տպե-	—
Սետաքս Նուրիայ	180	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	խառնով կանանց երեխա-	—	— Երեկ կը տպե-	—
Սետաքս Նուրիայ	100	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	ների հ. և մանկաբարձու-	—	— Երեկ կը տպե-	—
Վոգոնը Նուրիայ (սոմ.)	42	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	թեան: Պէտքով աչքի հ.:	—	— Երեկ կը տպե-	—
Յուրիգոնը (լաւոր) Ագու-	50	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	Չորեքշաբթի. Վէրմի-	—	— Երեկ կը տպե-	—
լեաց	25	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	չէվ ներքին հ. Բախտ	—	— Երեկ կը տպե-	—
Կոֆէն մոկի	20	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	րական և կաշու հ. Ա. Բա-	—	— Երեկ կը տպե-	—
„ լիպակի	20	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	խառնով կանանց երեխա-	—	— Երեկ կը տպե-	—
„ մարտինկոյինը	16	—	—	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	—	ների հ. և մանկաբարձու-	—	— Երեկ կը տպե-	—